Եկամուտների կազմը և դրանց կշիռները

	Եկամուտների տեսակներ	Կշիռ
1	մասնագիտական հմտությունների և կարողությունների վրա հիմնված հիմնական աշխատաժամանակում ստացվող աշխատավարձը (դրան հավասարեցված այլ վճարները) և սեփական ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացվող ՀՀ հարկային մարմիններ ներկայացվող փաստաթղթերով հիմնավորված եկամուտը (շահույթը),	100%
2	վարձակալությունից ստացված եկամուտ, որը հիմնավորված է օրենքով սահմանված կարգով կնքված վարձակալության պայմանագր(եր)ով (ստացվել է վարկի դիմումի ընդունման օրվան նախորդող առնվազն 3 ամիսների ընթացքում) և/կամ անկախ գնահատող կազմակերպության կողմից կատարված վարձակալության վճարի գնահատման ակտով[1]: Ընդ որում որպես վարձակալության հանձնված գույք չի կարող դիտարկվել հաճախորդի բնակության հասցեի գույքը:	80%
3	կենսաթոշակ՝ երկարամյա ծառայության (Ոստիկանության, Պաշտպանության նախարարության, Քրեակատարողական և այլ համապատասխան մարմինների աշխատակիցներ, մանկավարժներ, դատավորներ և այլն), կերակրողին կորցնելու և այլն (բացառությամբ տարիքային և հաշմանդամության կենսաթոշակի)	100%
4	պետական գանձապետական պարտատոմսերում, ՀՀ ԿԲ արժեթղթերում, այլ արժեթղթերում ներդրումներից ստացված եկամուտներ՝ վարկի դիմումի ընդունման օրվան նախորդող առնվազն մեկ տարվա ընթացքում	60%
5	վերջին հաշվետու տարվա ընթացքում վարկառուի ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ, որոնք հիմնավորված չեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերով, սակայն հիմնավորված են ներքին հաշվառման փաստաթղթերով՝ եթե ձեռնարկատիրական գործունեության վերլուծությունը իրականացվել է Բանկի համապատասխան ստորաբաժանման կողմից	100%
6	առնվազն մեկ տարվա ընթացքում վճարովի աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցում, որը հիմնավորվում է համապատասխան պայմանագրով	մինչև 100%
7	վարկի դիմումի ընդունման օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում ստացված փոխանցումներ, եթե դրանք ստացվել են նվազագույնը 4 անգամ պարբերաբար առնվազն 90 օրը մեկ, իսկ Բանկի միջոցով ստանալու դեպքում, նվազագույնը 3 անգամ	60%
8	վարկի դիմումի ընդունման օրվան նախորդող առնվազն մեկ տարվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան վարկի դիմումի ընդունմանը նախորդող 3 ամիս առաջ, Բանկում և/կամ այլ ֆինանսական հաստատություններում ներդրված դրամական միջոցներից (ավանդից) ստացված տոկոսները	50%
9	վարկառուի գործող հիփոթեքային վարկի համար վերադարձվող եկամտահարկի վերադարձի միջին գումարը, եթե առկա են հիմնավորող փաստաթղթեր	100%
10	այլ եկամուտներ՝ ընդունելի Բանկի համապատասխան իրավասու մարմնի կողմից	մինչև 100%